ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-91-Ն օրենքի 6-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-րդ մաս.

«3.2. Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով սույն օրենքի անբաժանելի մաս համարվող հավելված N 1-ում և N 2-ում սահմանված արտոնագրային վճարի չափը հաշվարկելիս կիրառվում է Ստեփանակերտ քաղաքում՝ 0,6, շրջկենտրոններում և այլ վայրերում՝ 0,3 գործակից:»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2016 թվականի ապրիլի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա և գործում է մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում կատարվում է 2016 թվականի ապրիլի 1-ից հետո մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը հաշվարկված արտոնագրային վճարների վերահաշվարկ և ավել վճարված գումարներն ուղղվում են տվյալ հարկ վճարողի ապագայում առաջացող արտոնագրային վճարների մարմանը և (կամ) վերադարձվում:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ **Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**